Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գուգարքի Շիրազի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (3 դասաժամ), ֆիզիկայի (3 դասաժամ), մաթեմատիկայի (12 դասաժամ) թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թոստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3X4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
4. Անձը հաստատող փաստաթուղթ
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
7. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ,
8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 3-ին՝ ժամը 14^{00}-ին, Գուգարքի Հ. Շիրազի անվան ավագ դպրոցում: Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ գ. Գուգարք, 6-րդ փողոց, շենք 38, հեռ. (095)01-02-88: